

Ք Ա Դ Ա Ծ Ն Ե Բ

Հայոց Ազգագրական ընկերութեան արժանազրութիմներից

1906 թուի յունիսի 11-ին, Գիւղատնտեսական ընկերութեան գանձին կայացաւ Ազգագրական-Հրատարակչական ընկերութեան բաժնեան բաժնեառէլերերի ընդհանուր ժողովը, ուր պարզուեց, որ այս ընկերութիւնը իւր 5½ տարուայ (1900 թ. 21 նոյեմբ. մինչև 1905 թ. յունիսի 11), դոյութեան ընթացքում հրատարակել է Ազգագրական Հանդիսի VII, VIII, IX, X, XI և XII գրքերը, և Հայութեանի «Հայ աշուղներ» ժողովածուն, ինչպէս և միքանի արտատպութիւններ՝ Թաջրերունու «Հայկական սովորութիւններ», Շահազիզի «Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք», Յովսէփիեանի «Ռուսաստամ Զալը», և Կարա-Մուրզիյի «Շրագիր տնայնազործութեան վերաբերեալ նիւթնը հաւաքելու»:

Նիւթականի կողմից էլ ընկերութիւնը ունեցել է ընդամենը 6150 ր. ծախք, այնպէս որ այժմ մնում է երկրորդ փոխառութեան երկու խաղատում, 266 ր. առձեռն զրամ և 2572 կտոր գիրք՝ 3858 ր. 50 կ. արժողութեան, մօտ 500 ր. ապառիկ և մօտ 100 ր. արժողութեան քլիշաներ:

Ապա վարչութիւնը զեկուցեց, որ կամենալով ընդարձակել այս ընկերութեան զարծունէութեան սահմանը, իւր հովանաւորութեան տակ առնել Անդրկովկասի հութիւնները, որոշել է փոխարկել առներական հիմունքների վրայ զրուած այս ընկերակցութիւն՝ իսկական ընկերութեան, ուստի և կազմել է կանոնազրութիւն, քննութեան ևնթարկել այս, Ազգագրական-Հրատարակչական ընկերութեան ընդհանուր ժողովում և ներկայացրել կովկասի Փռաբարբային՝ հաստատելու, որը և բարեհաճել է հաստատել:

Լաելով վարչութեան այս զեկուցումը, ժողովը միաձայն ուրոշեց փակուած համարել Ազգագրական-Հրատարակչական ընկերութիւնը և նրա ըոլոր կայքը յանձնել այս նոր հաստատուած Հայոց Ազգագրական ընկերութեան, այս պայմանով, որ այս Ազգագրական-Հրատարակչական ընկերութեան բաժնեառէրերը համարուեն այս նոր Հայոց Ազգագրական ընկերութեան մշտական անդամներ:

Այսուհետև տեղի ունեցան մի քանի չորսաւորական ձառնախօսութիւններ նորահաստատ Հայոց Ազգագրական ընկերութեան բացման առթիւ և միաձայն որոշուեց դնել նրան, այս առաջին հայկական գիտական ընկերութիւնը Նորին Սրբութիւն Մկրտիչ Ա. Վեհափառ Կաթողիկոսի բարձր հովանաւորութեան ներքոյ:

Ապա այս բաժնետէրերը Հայոց Ազգագրական ընկերութեան նոր գրուած անդամների հետ գաղտնի քուէարկութեամբ ընտրեցին ընկերութեան խորհրդի, խմբագրական և վերաստուգող մասնաժողովսերի անդամներ հետևել անձերին.

Խորհուրդ.

Նախագահ՝ Աղէքսանդր Մելիք Ազարեան.

Փոխ-Նախագահ՝ Տ. Հայկանոյշ Մարտիրոսեան.

Գանձապահ՝ Առաքել Սարուխանեան.

Անդամներ՝ Տ. Նատալիա Նունուֆարեան, Մնացական Խոսնուց և Յովսէփ Տէր-Դաւթեան.

Անդամ քարտուղար՝ Երուանդ Լալայեան:

Անձնափոխանորդներ՝ Եփրեմ Մատուրեան և Քրիստափոր Տէր-Սարգսեան:

Խճբագրական Մասնաժողով.

Նախագահ՝ Երուանդ Լալայեան.

Փոխ-Նախագահ՝ Աւետիք Եղեկեան.

Անդամներ՝ Յակոբ Մանադեան, Աշոտ Աթանասեան, Մամիկոն Քէրգեան:

Անդամ-քարտուղար՝ Լևոն Բաբայեան.

Անձնափոխանորդներ՝ Միքայէլ Յովհաննիսեան և Խաչատուր Մամուէլեան:

Վերաստուգոլ Մասնաժողով.

Սարգիս Խարագեան, Յակոբ Մտեփանեան, Կարապետ Շիրինեան:

Ման. Եղեկեան, Մամուէլեան և Յովհաննիսեան բաղարից հեռանալու և այլ պատճառներով հրաժարուած են:

1906 թուի Սեպտեմբերի 24-ին, կայացաւ Հայոց Ազգագրական ընկերութեան ընդհանուր ժողովը, ուր որոշուեց յարգել կարս, Աղէքսանդրապօլ, Նոր-Բայազէտ և Երևան քաղաքներից մատուցուած խնդիրները՝ այդ տեղերում Հայոց Ազգագրական ընկերութեան ճիւղեր բաց անելու:

Այս որոշման հիման վրայ այդ քաղաքներում արդէն բա-

ցուել են ճիւղեր, որոնց ընդհանուր ժողովներում գաղտնի քուէաբ-կութեամբ կատարուել են հետեւեալ ընտրութիւնները.

Ա. Կարսի նիւլ.

Վարչութիւն.

Նախագահ՝ Մամբրէ վարդապետ Մելիք-Աղամեան.

Փոխ-նախագահ՝ Մինսս քահանայ Տէր-Պետրոսեան.

Գանձապահ՝ Անտօն Կուզեան.

Անդամ՝ Համազասպ Տէր-Խաչատրեան.

Անդամ քարտուղար՝ Մելիքսեղեկ Եղիկեան.

Անձնափոխանորդներ՝ օր. Սաթենիկ Վանցեան, Ամբո-սիս Սրորչիկեան, Լիքարիտ Ալլահվերդեան:

Վերաստուգող յանձնաժողով՝ Հմայեակ Արաջեանց, Արարատ Տէր-Գրիգորեան և Համբարձում Տէր-Անանիկեան:

Բ. Աղեքսանիդրապօլի նիւլ.

Վարչութիւն.

Նախագահ՝ Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան.

Գանձապահ՝ Աղարէկ Ամիրեան.

Անդամներ՝ Սաղաթէլ Թարաղեան և Համբարձում Տէր Գրի-գորեան.

Անդամ-քարտուղար՝ Սարգիս Մուրայաջեան (Ատրպետ):

Անձնափոխանորդներ՝ Նիկողայոս Կարապետեան և Պետրոս Մոնոռեան:

Գ. Նոր-Բայագիէի նիւլ.

Վարչութիւն.

Նախագահ՝ Ստեփան Ղորդանեան.

Գանձապահ՝ Ստեփան Բաղրիկեան.

Անդամներ՝ բժ. Զաքարեան և Հայկ Տէր-Միքայէլեան:

Անդամ քարտուղար՝ Պետրոս Զալդարանեան:

Անձնափոխանորդներ Իգնատիոս Տէր Մովսիսեան և Ռուբէն Աղարեանց.

Վերաստուգող յանձնաժողով:

Յովհաննէս Սարուխանեան, Լևոն Ափրիկեան և Գեղամ Տէր Սահակեան:

Այս ճիւղի ընդհանուր ժողովը ի նկատ առնելով որ պ.

Ստեփան Ղորդանեան իրեւ զաւառապետ մեծ հոգս է տանում՝ զաւասի հոգութիւնները պահպանելու վրայ, ինքը ուսումնասիրում է ժողովրդի կեանքը և բազմաթիւ յօդուածներ ունի «Մշակ»-ում՝ տպուած «Գաւառական նամակներ» խորագրով և որ մեծ ազակ-ցութիւն է ցոյց տալիս իւր զաւառում դիտական նպատակով ճա-

նապարհորդողներին՝ ընտրեց նրան Հայոց Ազգագրական ընկերութեան Նորմայագէտի ճիւղի պատուաւոր անդամ:

Դ. Երեւանի ճիւղ.

Վարչութիւն.

Նախագահ՝ բժիշկ Բէդ-Յովսէփեան.

Գանձապահ՝ Յովհաննէս Ղորդանեան.

Անդամներ՝ բժ. Զարմայր Տէր-Անդրիասեան, Յովհաննէս Մելիք-Աղամալեան.

Անդամ-քարտուղար՝ Ս. Տէր-Գաբրիէլեան.

Անձնափոխանորդներ՝ Է. Յարութիւնեան և Տ. Տէր-Արրահամեան.

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայոց Ազգագրական ընկերութիւնը կազմակերպել է մինչև այժմերեք դասախոսութիւն: Դասախոսել են պ. պ. Ե. Լալայեան, Միքայէլ Յովհաննիսեան և Լէօն Խմբագրական Մասնաժողովը խորին ջնորհակալութիւն յայտնելով վերոյիշեալ դասախոսներին, որոշեց ամփոփել այդ դասախոսութիւնները իւր գործունէութեան տարեկան հաշուետութեան զեկուցման մէջ:

Հայոց Ազգագրական ընկերութեան 78 մշտական անդամների վրայ, որոնց անունները տպուած են Ազգագրական Հանդէսի XII գրքում, աւելացել են նաև հետեւեալ հինգը, որոնք վճարել են-յիսունական ըուրլի:

- 1) Մտեփան Մանուէլեան.
- 2) Սարգիս Նունուֆարեան
- 3) Եփրեմ Մատուրեան.
- 4) Մարտիրոս Վարդանեան.
- 5) Գէորգ Մելիք Կարագեօղեան